



Հայաստանի կենսաբ. հանդես, 1(70), 2018

ՀՈՄԵՈՊԱԹԻԱՅԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԿՈՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Ռ.Յ. ՀԱԿՈՒԲՅԱՆ

Երևանի Մ. Դերաջու անվ. պետական բժշկական համալսարան
rune39@mail.ru

Սույն հոդվածում առաջարկվում է հոմեոպաթիայի տեսական հիմնավորման հայեցակարգ: Ջրի մոլեկուլների կողմից ջրածնական կապերի շնորհիվ լուծված նյութի մոլեկուլները ներառվում են դրանց նկատմամբ տարածական, էլեկտրամագնիսական և այլ տեսակետներից կոմպլեմենտար (ներդաշնակ) հիդրոբյուրեղականության մեջ: Առաջացած կլատրատները (գերմոլեկուլներ) ուժեղ թափահարումից կտրատվում են և մոլեկուլների դուրս գալուց և դրանց վերջնական հեռացումից (սուրացում) հետո որոշ ժամանակ իրենց կայունությունն ու ներդաշնակությունը պահպանած կլատրատների բեկորները օրգանիզմում հեշտությամբ հավաքվում են նույնանման նյութերի մոլեկուլների շուրջը և կլատրատների տեսքով արտաքսում օրգանիզմից:

Հոմեոպաթիա – ջրածնական կապ – կոմպլեմենտարություն – կլատրատներ

В данной статье предлагается концепция теоретического обоснования гомеопатии. Молекулы воды с помощью водородных связей комплементарно ассоциируются вокруг молекул растворенного вещества, создавая гидрокристаллические решетки – клатраты (супрамолекулы). После сильного встряхивания решетки разрушаются, а после конечного разбавления в растворе остаются только комплементарные “осколки” гидрорешеток, сохранившие некоторую устойчивость. Они легко окружают подобные молекулы и в виде клатратов выводят из организма.

Гомеопатия – водородная связь – комплементарность – клатраты

The paper presents the concept of theoretical justification of homeopathy. Water molecules are associated around the solute molecules by means of hydrogen bounds forming complementary hydro-crystalline lattices – clatrates (supramolecules). After active shaking the lattices are destroyed and after a final dilution only complementary fragments of the hydro- lattices, which maintain a certain resistance, remain in the solution. They easily surround similar molecules and discharge them from the organism in the form of clatrates.

Homeopathy – complementarity – clatrates

Հիպոկրատը մ.թ.ա. մոտ 400 թ. առաջարկում էր *մարդախոտի* (мандрагора) արմատի փոքր քանակներ մոլազարության (мания) բուժման համար, հաշվի առնելով, որ մեծ դոզայի դեպքում այդ արմատը առաջացնում է նույնանման ազդեցություն [10]:

Պարացելսը (1493-1541) պնդում էր, որ «մարդուն բուժում են նրա հիվանդության պատճառ հանդիսացող նյութի փոքր քանակները» [9]:

Հոմեոպաթիայի (հուն. *homeo*–նման, *патия* – հիվանդություն) հիմքում ընկած է Սա-մուել Հանեմանի (1755-1843) «նմանը նմանով» (լատ. *similia similibus curantur*) բուժման կոնցեպցիան [5]:

Հոմեոպաթիկ պատրաստուկների համար հումք են հանդիսանում այն նյութերը, որոնք խիստ փոքր քանակներով օրգանիզմ ներմուծելիս առաջացնում են տվյալ հիվանդության ախտանիշները: Դրանք կարող են լինել հանքանյութեր, բույսեր, թույլներ և այլն:

Դասական հոմեոպաթիկ ֆարմակոպեայում ընդգրկված են մոտ 1200 դեղանյութ: Հոմեոպաթիան հակադրվում է ռացիոնալ բժշկության սկզբունքներին:

Հոմեոպաթիան ունի մոտ 200 տարվա պատմություն, սակայն մինչև այժմ չունի տեսական հիմնավորում: Համարվում է, որ հոմեոպաթիայի սկզբունքները չեն համընկնում առողջ և հիվանդ օրգանիզմների գործունեության գիտական պատկերացումների հետ: Հոմեոպաթիկ դեղերի և պլացեբոյի համեմատական կլինիկական փորձարկումների (англ. meta-analysis) արդյունքները հաճախ չեն տարբերվել, չնայած զուգահեռ նշում են նաև, որ փորձերի մեթոդները հավաստի չեն եղել [11]:

Հոմեոպաթիայում կիրառում են նյութի տասնորդական (1:10) կամ հարյուրերորդական (1:100) նոսրացումները, որոնք նշանակվում են D և C տառերով: Երեք անգամ կրկնված տասնորդական նոսրացումը (1:1000) նշանակում են «3D»-ով, 12 անգամ կրկնվածը (1:10²⁴)՝ «12C»-ով: Հաշվարկները ցույց են տալիս, որ 12C և ավելի մեծ ինդեքսով նոսրացումների դեպքում միջավայրում նյութի անգամ մեկ մոլեկուլի գտնվելու հավանականությունը գերո է [1]: Ներկայում օգտագործվում են հիմնականում 3D-ից – 30D նոսրացումները:

Բացահայտել պատրաստուկում այդ նյութերի առկայությունը նույնիսկ ժամանակակից մեթոդներով հնարավոր չէ: Այդ պատճառով հոմեոպաթիան համարվում է կեղծ գիտություն, խաբեություն, առավել ևս որ դրանով սկսեցին զբաղվել շահամոլները, խաբեբաները [3]: Հանեմանը պնդում էր, որ իր պատրաստուկներում պարունակվում է դեղի ոգին (Էներգիան):

Հոմեոպաթներն արդարանում են «ջրի հիշողության» գաղափարով: Այլ բացատրություն չկա: Սակայն ժամանակակից գիտության տվյալներով ջրի ֆիզիկա-քիմիական հատկությունները բացառում են ջրի հիշողության գաղափարը [4]:

Բազմաթիվ երկրներ պարբերաբար հրաժարվում են հոմեոպաթիայից, սակայն շատ տեղերում այն համարվում է հեղինակավոր բժշկություն:

Հոմեոպաթիայի աքիլեսյան գարշապարը «ջրի հիշողությունն է» [6]:

Բոլոր փաստարկները, ի պաշտպանություն ջրի հիշողության, հիմնվում են Չենինի դոկտորական դիսերտացիայում [2] նշված առեղծվածային բացատրությունների վրա այն է՝ ելային լուծույթում գտնվող նյութը ունի որոշակի Էներգիական կառուցվածք (энергоструктура) և որոշակի ձևով ազդում և կողավորում է լուծիչի Էներգակառուցվածքը: Բազմակի թափահարելիս և նոսրացնելիս նյութի Էներգիական կողը փոխանցվում է լուծիչի հաջորդ բաժնին և կողի միջոցով տեղի է ունենում բուժական էֆեկտի (?) փոխանցում: Նյութը լուծույթում թափահարելիս ջրի մոլեկուլները շարվում են որոշակի կարգով և ոնց որ թե հիշում են ելանյութի ինդիվիդուալ ինֆորմացիան: Բայց ինչպես հասկանալ մի նյութի բուժական էֆեկտը, երբ այն օրգանիզմ է տրվել նույն տիպի հիվանդության ախտանիշներ առաջացնելու նկատառումով: Դիսերտացիայում միակ ռացիոնալ պահն այն է, որ ջուրն առաջացնում է որոշակի չափերի և կյանքի տևողությամբ կառուցվածքային տարրեր:

«Ջրի հիշողության» կողմնակիցները վկայակոչում են ճապոնացի Էմոտոյի գրքերը [12], որոնք գիտական մամուլում չեն հրատարակվել:

Ըստ պաշտոնական գիտական մամուլի՝ ջուրը շնորհիվ ջրածնական կապերի լուծված նյութի շուրջն առաջացնում է որոշակի ձևով կլաստերներ և նոսրացնելիս նյութը հեռանում է, իսկ ջրի դիպոլները մնում են իրար հետ կապված կլաստերների ձևով, որը «ջրի հիշողությունն է»?: Բայց ինչպես հիմնավորել բուժման պրոցեսը հայտնի չէ, առավել ևս, որ լուծված նյութը խիստ նոսրացման հետևանքով հեռանում է, իսկ դրա հիշողությունը մնում է: Տրամաբանական է արդյո՞ք, որ ոչ թե նյութը, այլ դրա հիշողությունն է ազդում: Ինչպե՞ս պատկերացնել բուժման պրոցեսը:

Սովորաբար հոմեոպաթները հաջողությամբ բուժում են մարսողական, սիրտ-անոթային համակարգերի, ալերգիաների, մաշկային և թոքային, մանկական, սկսվող դիաբետիկ հիվանդությունները: Ճիշտ կիրառման դեպքում հոմեոպաթիկ միջոցները կարող են լինել անփոխարինելի, հատկապես բարդ և անհասկանալի հիվանդությունների դեպքում և, բնական է, լրիվ անվտանգ են:

Փորձերը ցույց են տվել, որ հոմեոպաթիան առավել արդյունավետ է կենդանիների և ցածր տարիքի երեխաների բուժման դեպքում: Այս փաստը թույլ է տալիս ենթադրել, որ հոմեոպաթիան ներշնչման ու պլացեբո էֆեկտներով բացատրելի բացառվում է: Առավել ևս, որ պլացեբո երևույթը վերարտադրելի չէ:

Հոմեոպաթիայի երևույթի բացատրման ամենատարածված տեսություններից մեկի հիմքում ընկած է «Նյութի սիստեմատիկ հիշողության հիպոթեզը», համաձայն որի ջուրը պահպանում է բուժանյութի ինֆորմացիան նույնիսկ բազմակի նոսրացումներից հետո:

Հողվածում նույնիսկ ենթադրվում է, որ հոմեոպաթիկ լուծույթների «կոմպլեքս դինամիկական համակարգերում» պահպանվում են նյութի էներգիան ու դրա մասին ինֆորմացիան, և լուծույթում մոլեկուլային համակարգի նյութական կոնցենտրացիայի նվազմանը համապատասխան մեծացնում են նյութի կոնցենտրացիան: Մեկ այլ հողվածում հոմեոպաթիայի երևույթը աշխատում են բացատրել ռադիոալիքների օգնությամբ, որոնք հեշտ թափանցում են օրգանիզմի ջրի միջով [8, 13-15]:


«Human Toxicology» հեղինակավոր գիտական ամսագրում տպագրված է արտակարգ կարևոր հոդված, որտեղ ուսումնասիրված է արսենի (As) մահացու դոզաներով թուճավորված առնետների օրգանիզմից թույլի արտաքսման արդյունքները արսենի միկրոդոզաների օգնությամբ [7]: Փորձերը կատարվել են տարբեր Նոսրացումների արդյունավետությունը ստուգելու և «պլացեբո» էֆեկտի հետ համեմատելու նպատակով: Հոմեոպաթիկ դեղերը արդյունավետությամբ ու վերարտադրելիությամբ անհամեմատ գերազանցել են «պլացեբո» էֆեկտը: Սակայն տվյալ հոդվածը կարևոր է այն տեսակետից, որ ապացուցում է ոչ թե թունազերծման երևույթը, այլ հոմեոպաթիկ դեղանյութերի որոշ Նոսրացումների դեպքում օրգանիզմ ներմուծված թույլի (As_2O_3 , այլ ոչ թե դրա ձևափոխությունների) արտաքսման անհամեմատ արդյունավետությունը: Այսինքն, ջուրը, որը պահում է նյութի ինֆորմացիան, ոչ թե դրան ենթարկում է փոխարկման, այլ արտաքսում է օրգանիզմից: Ինչպե՞ս հասկանալ:

Պրոցեսն ավելի պարզ է, քան թվում է: Ջուրը խիստ կարևոր դեր է կատարում բնության և մարդու կյանքում: Ջուրը Երկրի մակերեսի և մարդու մարմնի զանգվածի մոտ 70%-ն է, օրգանիզմի միջավայրը և պահպանը: Այն վճռորոշ դեր է կատարում օրգանիզմում ընթացող բոլոր պրոցեսներում: Առողջ մարդու մեջ գոյություն ունի ջրային բալանս և տվյալ օրգանիզմին բնորոշ ջրային կառուցվածք: Ժամանակին մարդու ջրային կառուցվածքը ևս արյան խմբի նման կգրանցեն ծննդականում:

Ջուրն օժտված է մեզ հայտնի ու անհայտ բազմաթիվ հատկություններով, այդ թվում նաև մեծ զգայունությամբ և ազդեցիկությամբ բոլոր, հատկապես էլզոգեն նյութերի նկատմամբ:

Ոչ գոլորշի վիճակում ջրի բանաձևն արտահայտվում է $(H_2O)_n$ -ով, որտեղ n -ի մեծությունը կախված է ճնշումից, ջերմաստիճանից, լուծված նյութի բնույթից, էլեկտրամագնիսական դաշտերի առկայությունից և այլ գործոններից:

Ջրածնական միջմոլեկուլային (ոչ կովալենտային) կապերի շնորհիվ n թվով ջրի մոլեկուլների ասոցիացիան հետևանքով միջավայրում գտնվող ցանկացած նյութի մոլեկուլների շուրջն առաջանում են տարբեր ձևերի ու չափերի՝ այդ մոլեկուլներին տարածական, էլեկտրա-մագնիսական, ֆիզիոլոգիական և այլ տեսակետներից կոմպլեմենտար (ներդաշնակ) հիդրոբյուրեղավանդակներ և ռեցեպտոր-սուբստրատ տեսքով վերածվում են գերմոլեկուլների (կլատրատներ, супрамолекулы, տես նկ.): Համաշխարհային օվկիանոսի խորքերում անաերոբ մանրէների գործունեության արդյունքում կենդանական և բուսական մնացորդների քայքայումից առաջացած գազերը (CH_4 , CO_2 , H_2S , C_2H_6 , C_3H_8 ...) դուրս չեն գալիս մակերևույթ, այլ որոշակի ճնշման (օվկիանոսի խորության) և ջերմաստիճանի պայմաններում ներառնվում են ջրի մոլեկուլների տարբեր տեսակի ասոցիացիաներից առաջացած կոմպլեմենտար հիդրատային բյուրեղավանդակներում՝ վերածվելով գազային կլատրատների: Օվկիանոսի ընդերքում գերմոլեկուլների տեսքով մեթանի պարունակությունը բազմաթիվ անգամ գերազանցում է Երկրի վրա եղած վառելանյութի պաշարները և մեծ վտանգ է ներկայացնում Երկրի գլոբալ տաքացման դեպքում:



Նկ.1. Մեթանի մոլեկուլը ջրի բյուրեղավանդակում

Ըստ **Հանեմանի**՝ դեղի ազդման ուժը մեծանում է խառնուրդի պարբերաբար ինտենսիվ թափահարման («պոտենցում» կամ «դինամիզացում», նույնիսկ անոթը հարվածելով սեղանին) և խիստ նոսրացման հետևանքով:

Փորձենք հիմնավորել Հանեմանի դրույթները:

Ամեն նոսրացումից առաջ լուծույթի ինտենսիվ խառնման հետևանքով «ջարդվում» են ջրում գտնվող նյութի մոլեկուլների շուրջն առաջացած կլատրատային կառուցվածքները և 12C* ինդեքսով նոսրացված խառնուրդը, որը չի պարունակում անգամ մեկ մոլեկուլ լուծված նյութ, օրգանիզմ ներմուծելիս «ջարդման» հետևանքով առաջացած և նյութի մոլեկուլների նկատմամբ ներդաշնակությունը պահպանած որոշակի կայունությամբ կլատրատային բեկորները մեծ արդյունավետությամբ շրջապատում և կլատրատների տեսքով օրգանիզմից հեռացնում են այնտեղ գտնվող նույնանման էլզոգեն մոլեկուլները:

Կոֆեինը հայտնի է իր գրգռիչ, խթանող հատկություններով, սակայն հոմեոպաթիկ դեղատներում գերցածր կոնցենտրացիաներով այն վաճառվում է որպես հանգստացնող, քնաբեր միջոց: Խիստ նոսրացված պատրաստուկը գործնականորեն կոֆեին չի պարունակում: Խառնուրդը հարստացված լինելով նախնական կոֆեինի կողմից ինտենսիվ խառնման և նոսրացման պայմաններում ստեղծված որոշակի կայունությամբ կլատրատների կոմպլեքսներով, օրգանիզմում գտնվող տարածական, էլեկտրամագնիսական, ֆիզիոլոգիական և այլ տեսակետներից կոֆեինանման նյութերը ընկալիչ-սուբստրատ կոմպլեքսնորության շնորհիվ, վերածում են կլատրատների և արտաքսում օրգանիզմից:

Պրոբլեմը միայն հոմեոպաթների կողմից էլզոգեն սուբստրատի ճիշտ ընտրությունն է: Ախտածիւնների նմանությամբ նյութերի ճիշտ բացահայտումը կամ դիզայնը կնպաստեր հոմեոպաթիայի առաջընթացին: Գիտության ներկայի մակարդակը ի գործ է այդ իրականացնել:

Առաջարկվող հայեցակարգով կարելի է պատասխանել հոմեոպաթիային վերաբերող բոլոր հարցերին և հիմնավորել թվացյալ առեղծվածային երևույթները, ինչը կնպաստի այդ գիտության առաջընթացին: Կլատրատային տեսությամբ իմունիտետի գաղափարի բացատրությունը ևս առավել համոզիչ է, ինչը հաստատում է ջրի գերակա դերը այդ գործընթացում: Պատահական չէ, որ հիվանդության դեպքում օգնում է մեծ քանակի հեղուկների ընդունումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Бочков А.* Снова о разбавлениях. Троицкий вариант Наука, №93, с.15.(6.12.2011, 16.08.15).
2. *Зенин С.В.* Структурированное состояние воды как основа управления поведением и безопасностью живых систем (дисс. докт. биол. наук). М., 1999.
3. *Коган Д.А.*, Современная гомеотерапия – знахарство плюс шарлатанство, с. 216, 1964.
4. Комиссия по борьбе с лженаукой и фальсификацией научных исследований РАН. Меморандум №2. О лженаучности гомеопатии. Приложение №1. Ответы на часто задаваемые вопросы о гомеопатии и доводы в ее пользу. 6 февраля 2017.
5. Органон врачебного искусства, Изд. “Симилия”, 6-е издание, 1842 (1810, 1829, 1833...), 1921.
6. РАН. Меморандум №2. О лженаучности гомеопатии. Приложение №4. О памяти воды, 6.02. 2017.
7. *Cazin J.C. et al.*, "A Study of the Effect of Decimal and Centesimal Dilution of Arsenic on Retention and Mobilization of Arsenic in the Bat," Human Toxicology, July 1987.
8. *Coulter H.L.*, Homoeopathic Science and Modern Medicine: The Physics of Healing with Microdoses. Berclay : North Atlantic Books, 1981.
9. *Hargrave J.G.*, Paracelsus (German-Swiss physician), Encyclopædia Britannica. Check. 24.03 2009.
10. *Hemenway Henry Bixby* "Modern Homeopathy and Medical Science", JAMA: The Journal of the American Medical Association, XXII, 11, 367, 1894.

11. Liberaty A, Altman DG, Tetzlaff J et al. "The PRISMA statement for reporting systematic reviews and meta-analyses of studies that evaluate health care interventions: explanation and elaboration». *PLoS Medicin.*, 2009.
12. *Masaru Emoto, "The Messages from Water" 1, 2 u "Water knows the answer". Բրիտանացիք Մասարա Էմոտոյի համարում են կեղծ գիտնական "Википедии": http://en.wikipedia.org/wiki/Masaru_Emoto*.
13. Resch G., Gutmann V. Scientific Foundations of Homoeopathy. Munich: Bartel and Bartel, 1987.
14. Scofield A.M. "Experimental Research in Homeopathy: A Critical Review." *British Homoeopathic Journal*, 73 (VII-VIII 1984): 161-180, 211-226, 1984.
15. Ullman D. ed. Monograph on Homeopathy Research, vols.1 and 2 Berkley: Homoeopathic Educational Services, 1981, 1986.

Ստացվել է 16. 02.2018